

ԱՂՕՏ ԼՈՅՍ ՄԵ (1)

Տիար Ա. Չարեհեան նամակաւ մը, զոր պիտի հրատարակենք մեր յաջորդ թուով, կը զրկէ մեզ Տ. Ս. Բիւրատի մի ամբաստանագիրը, խնդրելով անոր հրատարակութիւնը, որուն կը ձեռնարկենք այսօր անկողմնակալ ոգով և մեր համառօտ դիտողութիւնները միացնելով:

Տիարք Ա. Մ. Պէրպէրեան և Գ. Շանթունի մասնաւոր գրութեամբ մը կը մասնակցին Տ. Ա. Չարեհեանի խնդրանքին:

Գահիրէ 7 Հոկտ. 1900

Մեծապատիւ Տիար Ա. Չարեհեան Աստ

Ազնիւ բարեկամ

Անկեղծ շնորհակալի՛ք Ձեզ այն նախաձեռնութեան համար, որով առաջինն եղաք գոռացնող « ճշմարտութեան ձայնը » հրատարակին վրայ: Հաւատացէ՛ք, ԱՐՇԱԼՈՅՍԻ երեկուան թիւին մէջ երեցող այդ հրաւէրը՝ միակ միջիջարական երեւոյթն է, որ ինձ յուսալ կուտայ դիմակազեծ ընելու պատուոյս ու ընկերային կեանքիս հետ խաղացող այն անխիղճ դաւաճիրները, որոնք Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան սեփականութիւն ու օրկան « Նոր Օր » ի սուրբ էջերը կը սեցնեն, միմիայն իրենց ներքին դիտումներն ու կիրքերը յագեցնելու տենչով, (2) որոնք կը յանգանին ինձ վերադրելու այնպիսի զեղծումներ, որոցմէ զերծ եմ ու անպարտ: մինչդեռ, իրենք, բուն զեղծողներն ու ոճրագործները, (3) կը ծաղրեն ժողովրդին իրաւունքներն ու իբրեւ պատգամ կը փորձեն ընդունել տալ իրենց յերկրած անհիմն զբարտաւթիւնները: (4)

Դուք, վեհօգի՛ բարեկամ, ժողովրդի հարազատ ու ճշմարիտ զաւակ, ճշմարտութեան անվեհեր շատագով, դուք, անհրաժեշտ կը զըտնէք պատուոյ ատենի մ'անյապաղ գումարման պէտքը. ատեն մ'ուր միայն պիտի կարելի ըլլայ երեւան հանել ճշմարտութիւնը, պատուով վաճառողը որուն հետին զօղուած են հրէշային, կերպարանեալ կեղծիքներ, մթին դաւեր ու անխոստովանելի կերքեր. . . : Այդ ընկերային ձեռնհաս ատենան է որ պիտի մերկացնէ ամեն գաղտնիք. հետեւաբար ես եմ առաջինը զրկաբաց ընդունողներէն այդ վսեմ հրաւէրը, զոր կ'ուղղէք ճշմարտութեան բարեկամներուն ու ընկերութեան նախնական շահերը պաշտպանողներուն (5):

Իմ անխաղած զաւաղիրները մէկէ աւելի են, ու ես մէկիկ մէկիկ կարող ու պատրաստ եմ բարձրաձայն արտասանելու անոնց անուններն ու գործը. անոնք՝ զինուած են իրենց արտադրանքով, զորս ըստ քմաց գործածելու անխղճութիւնն ունեցան, կոխտուելով ու եղծելով վստահութիւնը, զոր իրենց շնորհած էր Հանրային կամքը (6): Անոնք, Սեպտ. 9. ի ընդհ. ժողովոյ նստին մէջ ընտրուած անժամեայ Մայր-Դիւանը կը ներկայացնէին. Դիւան մը, որ կազ-

ՄԱՆՈՒԹ. ԽՄԲ.

- (1) Վերնագիրը մեզմէ է:
- (2) « Նոր-Օր » ի Սուրբ էջերը շատոնց սեցած են, իր վարիչներուն ներքին դիտումները ցոլացնելով:
- (3) Ո՞րքան ժամանակէ ի վեր:
- (4) Ո՞ր ճշմարտասէրէն դաս առած են արդեօք:
- (5) Անցնինք առ այժմ:
- (6) Նամակագիրը որ և է խղճահարութիւն չունեցա՞ւ արդեօք երբ այս սողերը կը գրէր:

լալէ՛ հաստատապէս ըսել թէ ինչքի և գոյութեան անբաւ գոհողութիւններ, որոնք կը կատարուին աշխարհիս ամեն կողմը հայրենաւարտութիւնն բառին ազդեցութեամբ, շատ անգամ անօգուտ և երբեմն ալ վնասակար են հայրենեաց դատին. վանդի այդ ամեն կորուստ կը կատարուի անքաղաքականօրէն, կամ հակառակ քաղաքականութեան նոյն ժամեայ պահանջներուն: Անշուշտ չ'կայ հայ մը որ ազգատեացութեամբ ամբաստանէ Ներսէս Պատրիարք Վարժապետեանը: Բայց գիտենք նաև որ անոր հայրենասիրութիւնը օգտակար չ'եղաւ հայրենեաց զաւակներուն համար. վանդի Պատրիարքը 1878 ի քաղաքականութիւնը անտես ըրած էր կամ լաուսուսմասիրած չ'էր: Նա՛ իր հայրենասիրութեամբ՝ պարզապէս գործիք մ'եղաւ ուրիշ Պետութեան մը ձեռքը:

Առանց օրուան քաղաքականութեան ու շ ղնելու, հայրենասիրական յարուած ձեռնարկներ դուն ուրեք բարի վերջաւորութիւն մ'ունեցած են: Տկարը կ'իյնայ, և հզօրը ատելութիւններ և վրիժառութիւններ կը կուտակէ իր գլխուն: Իբր օրինակ մէջ բերենք Քրանովալի պատերազմը. Պօէրները յաղթուեցան, վանդի անգործ էին իրենց հարիւրապատիկ հզօր թշնամեոյն առջև. իսկ Անդրկիցիք այսօր աշխարհիս ամենատեղի ազգը եղան: Այս երկու ազգերն ալ հայրենեաց սիրով վառուած ասպարէզ իջան, և երկուքն ալ խառնեցան այն պատճառաւ որ ժամանակին քաղաքականութեան ու շ չ'գրին:

Քանի մը տարի առաջ Յունական բանակները չարաչար խորտակուեցան միեւնոյն պատճառով:

Անհարկի կորուստներ անօգուտ և անդարմանելի կորուստներ են: Անձ մը որ ինքզինքը կը զոհէ ի սէր հայրենեաց, այնպիսի ժամանակ մը յորում հայրենիքը ո՛չ թէ իր արեան այլ իր ապրելուն պէտք ունի, այն անձը ո՛չ թէ իր հայրենասիրութեամբ և այլ իր անկեղծութեամբ միայն կրնայ պարծիլ, կրնայ զիւցազնանալ:

Ճշմարիտ հայրենասիրութիւնը կը պահանջէ մտքաւիշ, տոկալ, բարոյապէս և մտաւորապէս զարգանալ, և կարելի եղածին չափ խոյս տալ անօգուտ մահէն եթէ հայրենիքը իրապէս վտանգի մէջ չ'է, և եթէ ապրելը հայրենեաց աւելի նպաստաւոր է քան մեռելը. և՛ մանաւանդ՝ յարժամ և անընդմիջաբար հեռելի քաղաքականութեան: (1)

Ձեռք ուղեր աւելի երկարել մեր խօսքը, և մեր տեսութիւնը կ'եզրակացնենք փորձառութեամբ ստացուած սա ճշմարտութեան վրայ թէ հայրենասիրութիւն առանց քաղաքականութեան միշտ վնասակար եղած է, և պիտի ըլլայ:

Պ. Չէմպրըլէյն ալատ է ուղած ապրանքը ծախելու, բայց աշխարհս ստիպուած չ'է զայն գնելու:

Լաւ է գիտնալ որ խօսքեր, երբեմն խօսողին միտքը վարագուրելու կը ծառայեն միայն:

(1) Ընթերցողը թող ուսուսմասիրէ Հրէից մի հայրենասիրական շարժումը զոր նանակեցինք անցած օր:

մուտ էր ատենը վարելու և ուրիշ ոչինչ (7). իսկ մէկը, « Նոր-Օր » ի կազմաւորուած է (8) վարչութեան Գարուդար-Ներկայացուցիչ տիար զոր կրող Տիար Սմբատ Փափազեանն է, որ ինքզինք միայն վարչութիւն կարծելու յաւակնութիւնն ունեցած է միշտ եւ դեռ ունի: Առժամեայ Մայր-Դիւանի Ատենապետը Տիար Համբարձում Պէրպէրեան ու Ատենապետը Տիար Երուանդ Աւարեան, կցելով ասոնց « Նոր-Օր » ի կազմաւորուած վարչութեան բազմապատասխան Գարուդար-Ներկայացուցիչը Տիար Սմբատ Փափազեան (9) ահա՛ երեք ամբաստանաւորներ, որոնց ներկայանալը կը պահանջեմ պատուոյ ատենին առջև: Ես այժմէն ընտրած եմ իմ ներկայացուցիչներս, հանրութեան համակրանքը կ'ընդունիմ առանց որ և է առարկութեան, բաւական է որ ըլլան բոլորովին անկախ ու վստասելի անձնաւորութիւններ:

Կարգն է հիմայ մի առ մի թուելու այն ամբաստանութիւնները, որոնք իբր հիմ պիտի ծառայեն պատուոյ ատենի զննութեանց, և որոնք հետեւեալներն են, ի բաց առեալ այն տըխուր շարժառիթները, որոնք խնդրոյն հոգեբանական շղիղ կը կազմեն, թէև ունենան ներքին հանգամանք, « Նոր-Օր » ի վարչութեան Գարուդարին ու խմբագրապետին միջև դարձած ըլլալով. շարժառիթներ սակայն, զորս սիրայօժար պիտի բացատրեմ յատենից պատուոյ, երբ հարկը պահանջէ (10):

Ահաւաստիկ ամբաստանութիւններս.

Ս. ԲԻԻՐԱՏ

(Շարունակելի)

ԻՔԵՆԱՏԻՈՒ Կ. ՍԱՐԱՍԵԱՆ

ԴԵՐԶԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - Էլ - Հասիտ Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր, հանրածանօթ Անդրկիցի վաճառական - գերձակ ժՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տարախի դիմացը, նորաչէն խանութիւններուն մէջ:

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախողք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ զանելով, եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր զճարտման փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր վզեաներ ունենալով:

(7) Մեքէնայաբար, ըսել կ'ուզէ:

(8) Ուշադրութիւն:

(9) Մենք ամենամեծ զաւաղեր-գերակատարի մը անունը չենք տեսներ հոս թիւս ամբաստանագրողը մասնաւոր դիտումով մը զանց ըրած է զայն, կամ ուրիշ առիթի մը վերապահած է:

(10) Սպառնալի հանգամանք մ'ունի ամբողջ այս պարբերութիւնը ուղղեալ առ Տ. Ս. Փափազեան: Մանաւանդ շարժառիթներ բառը շատ գէշ կը հնչէ: Ի՞նչ բանի շարժառիթներ. զիրար ամբաստանելու թէ ընկերութիւնը տապալելու եւ « Նոր-Օր » ի բերացնելու համար եղած ճիգերու շարժառիթներ:

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ՍԵՂՄԻՐԱՆԸ (forus)

Առ Հայ Տիկնայս եւ Օրիորդս

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ .)

Այս վերջնոյն շատ անգամ կը յաջորդեն անտանելի ու տեւական հիւանդութիւններ եւ մահ : Մայր մը որոյ լիարդն ու ստամոքսը սեղափոխուած են սեղմիրանին պատճառաւ , եւ չեն գործեր կանոնաւորապէս , թէեւ ուղղակի չի փոխանցեր իր այս անկանոնութիւնը ծնած զաւակներուն , բայց զանոնք տրամադիր կ'ընէ այսօրինակ հեւանդութեան մը : Մեր մայրերն ու կիները առանց ուշադրութիւն ընծայելու այս բաներուն՝ իրենց մարմիններուն հետ խմորէ զանգուածի մը պէս կը վարուին : Անոնք կը կարծեն թէ ազատածին մարդը կաղապարներու մէջ դրուելու կամ վարունգի ձեւ ստանալու համար՝ չիչը մոռնուելու ստեղծուած էր : Առհասարակ ընդունուած իրողութիւն մ'է թէ՛ տղայք հորմէն աւելի մօր մարմնական կազմակերպութիւնը կը ժառանգեն ու կ'իւրացնեն . այնպէս որ ամուսին մը որքան զօրեղ ու կաշմուռն ալ ըլլայ , դարձեալ տկար ու ձուլած ժառանգներ պիտի ունենայ իր սեղմիրանաւոր եւ հետեւաբար հիւանդութիւններ ունենայ , սակայն առնոր անջնջելի հետք երկրորդ կամ երրորդ սերունդեան մէջ պիտի երեւի : Հին Յունները կը ջանային առողջապահական եղանակներով կրթել պատրաստել հուժկու եւ քաջաոգի մայրեր պատերազմի ատեն արի ու զօրաւոր մարտիկներ հասցնելու համար : Յունաստան իր փառապատկ օրերը իր իզական սեռին կը պարտի՝ որք առողջապահական պահանջկոտ ու անհրաժեշտ օրէնքները խստիւ կը պահէին եւ կը ծնէին առողջ զաւակներ կայրենեաց : Անոնք ոչ միայն յաղթական կը հանդիսանային ձակապատմարտներու մէջ , այլ եւ կեանքի բոլոր պայքարներուն դիմադրելու ընդունակ ու կարող էին : Գիտակցութեամբ , պրոքարութեամբ ու քաջութեամբ մղուած կեանքի մարտը եւեթ կրնայ պարգեւել հոգեոյ խաղաղութիւնը , եւ որ արդիւնք է իրապէս առողջ կազմութեան :

Սեղմիրանը մեր քաղաքակիրթ կոչուած սերունդը այլասերած սերունդի մը փոխած է : Եթէ ծնողները զանց չ'ընէին առողջապահական օրէնքները , իրենցմէ ծնածները աւելի ուժեղ ու երկարակեաց պիտի ըլլային : Մեր մարմինը կատարեալ գոլըս գործոցն է մեծ Արուեստագետին , թանկագին է այն մեր բոլոր ունեցածներէն :

1820 ին յունական Միլօ կղզւոյն մէջ գրտնուած Աստղիկան գեղաչէն արձանին ազդերն ու մէջքը՝ որ չ'այլասերած կնոջ բնատիպարը կը ներկայացնէ , թէ բարդատեսք այժմու սեղմիրանաւոր կնոջ ազդերուն ու մէջքին հետ , պիտի հիանանք առաջնոյն կազմութեան համաչափ ազնուութեան վրայ , որոյ տիտուր հակապատկերը կը կազմէ վերջնոյնը :

Նմանապէս կէս-քաղաքակիրթ կամ վայրենի ազգերու կանանց ազատարձակ յօրինուածը՝ իր լայն , հաստատուն ու զօրեղ ոսկորներով , գնդերներով ու մկանունքներով խիստ խոտոր կը համեմատի ձորձէ գառագեղներու մէջ պընդուած կամաւոր-անձնազոհներու յօրինուածին հետ : Ո՛չ . մի՛ խաբուիք , ո՛վ նորածեութեան հետեւող խղճալի մայրերու ու քոյրերու . բնութիւնը պիծակի իրանով մարդ արտադրած չ'է երբէք : Խնամօք ուսումնասիրելու ետեւէ եղէք ընկալուածութիւնը , արուեստներն ու գեղագիտութիւնը , եւ փոխանակ հետեւելու Բարիզական տձեւ , անբնական ու անպարկեշտ նորոթիներուն եւ պազստ վարքերուն՝ ջանացէք հագուել բանականութեան ու բնութեան անխաղախ օրէնքներուն համաձայն : Ազատագրեցէք զձեզ այդ բռնաբարու կապանքներէն . ի բաց վանեցէք բոլորովին ձեր շրջանակէն այդ պնդող վերտազգեստը՝ որ մայր ըլլալու վսեմ ու սրբալան պարտականութիւնէն ալ ստէպ կը զրկէ ձեզ , եւ

կամ այդ աստուածակերտ մարմինը , կենդանի անդրին սրտայօջ վշտերու եւ անբուժելի ախտերու կը մատնէ : Թեթեւ մէկէն ի մէկ այս անբանաւոր ու չարաղէտ սովորութիւնէն մեկուսանալը անպատեհ թուի ձեզ , սակայն կը հաւատամ թէ ստանալիք առողջութիւննիդ ամեն բանէ աւելի թանկագին ու կարեւոր է : Օ՛ն քաջ եղէք , ազնիւ հայուհիներ , գեղեցկութիւնը պարզութեան եւ բնականութեան մէջ կը կայանայ . հետեւաբար ձեր անսեթեւեթ , բնական ու բարեձեւ կազմութեամբ բարի օրինակ հանդիսացէք յոռի քաղաքակիրթութեան մը մուտ խորչերուն մէջ խաբխափող ու սլըքտացող օտարուհիներուն , եւ այս գովելի բաղձանքը ձեր յարկերուն ներքեւ յարածամ ներշնչեցէք ձեր զաւակներուն :

Գահիրէ 8 հոկտ . 1900

ՏՐ . Կ . Գ . ՈՒՁՈՒՆԵԱՆ

ՀՆՈՒԳՐԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Չինական վերջին լուրերը նշոյլ մը կը ցուցնեն խաղաղութեան վերահաստատման , թէեւ հեռաւոր է : Երկնից որդին իր - դէպ օտարներն ապստամբ - Պօքսըր հպատակներուն պետերէն մի քանին պատժելու միտումներ ցոյց կուտայ . Եւրոպական Տէրութիւնները անշուշտ գոհ պիտի մնան - առ ի չգոյէ լաւագունի - Չինաց կայսեր այս առաւել կամ նուազ անկեղծ տրամադրութիւններէն : Այս խնդրոյն մէջ առիւծի մասը բաժին ինկաւ Ռուսիոյ , որ թերեւս աւելի քիչով պիտի բաւականանար . և գառնուկի մասը - այսինքն ոչինչ - Անգղիոյ , որ ստուգապէս՝ եթէ ոչ պատրաստութիւն գէթ յաւակնութիւն ունէր կուլ տալու ամբողջ Չինաստանը , եթէ կոնակին վրայ չ'ունենար թրանսվալի պէս խոչոր կուլ մը :

Լորտ Ռօպրթս որ կը պատրաստուէր , կ'ըսուի , Հարաւ-Ափրիկեան պատերազմը վերջացած հրատարակել , պէտք է որ հերքէ այդ տարածամ այլ բաղձալի լուրը : Ահա Պօէրները նորէն սկսան իրենց քաջագործութիւնները . գրաւելով քաղաքներ , գերելով Բրիտանական զօրքեր և սպայներ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լսարան-Ընթերցատունը որուն Պալար-Մուրուրի մէջ բացուածը աւետելու բաղդն ունեցանք ասկէ առաջ , այսօր ալ , ինչպէս կ'երևի Պատ . Գործ . Ժողովոյ յետագայ ազգարարութիւնէն , առաջին Լսարանը կուտայ և կը յուսադրէ զմեզ թէ՛ իւր գործունէութիւնը պիտի պսակուի արժանի քաջակերութիւն գտնելով ազնիւ ազգայիններէն :

ԱԶԳ

Լսարան Ընթերցատան Գործ . Ժողով պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան որ , յառաջիկայ կիւրակէ օր (14 հոկտ . 1900) կէս օրէ վերջ ժամը 3 ին Պալար-Մուրուրի Լսարան Ընթերցատան մէջ պիտի բանախօսէ ծանօթ առողջաբան Տիար Կ . Ուզունեան նիւթ ունենալով Ազգ . կեանքէ և առողջապահութենէ :

Երգեցիկ խումբ մը Ազգ . երգեր պիտի երգէ , իսկ փոքրիկն Օր . Հայկանուշ Միսաքեան Գամառ-Գաթիպայի քերթուածներէն հատ մը պիտի արտասանէ : Ուստի սիրով կը հրաւիրուին լսելու

փափաքող բոլոր ազգայինները . առանց սեռի խտրութեան :

Մուտքը ազատ է ամենուն համար :
Ի Դիմաց Լսարան Ընթերցատան Գործ . Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Օ . ԹՈՒՄԱՆԵԱՆ ՏՐ . Կ . Փ . ԷՎԼԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ . ՊՈԼՍԷՆ կը գլուխ Սեպտ . 29 թըլականու .

Էրզրումի Ռուսական Փոխ-Հիւպատոսն ու Քարտուղարը Գիւրաբերու կողմէն յարձակում կրեցին Էրզրումի և Երզնկայի ճամբուն վրայ : Հակառակ հետևող զօրքերու ընդդիմութեան , անկարելի ելաւ անվտանգ անցնել : Երկու թուրք սպաննուեցան և Ռուս պաշտօնեաները ստիպուեցան փախչիլ , ձգելով իրենց բոլոր գույքերը :

Կ . ՊՈԼՍՈՅ Ռուսական դեսպանը ծանուցադիր մը ուղղած է Բ . Դրան , անոր ուշադրութիւնը հրաւիրելով քիւրտերու ըմբոստութեան հետեւանաց վրայ , պահանջելով որ սաստկապէս պատժուին Էրզրումի Ռուսական Փոխ-Հիւպատոսին վրայ յարձակողները :

ՊԱՐՄԻՑ ԵԱՀԻՆ համար կ'ըսուի թէ և գիպտոս պիտի այցելէ :

ԱնԳՂԻՒԱԿԱՆ թերթերը կ'ըսեն որ Լորտ Ռօպրթս իբր վարձատրութիւն իր ծառայութեանց՝ պիտի ստանայ Կոմսի տիտղոսը , որուն պիտի ընկերանայ աննչան պարգև մը . . . 100,000 ոսկւոյ :

Կ'երևայ որ մեռցնելու արհեստը աւելի արդիւնաբեր է քան ուսուցչութիւնը . . .

Կ . ՊՈԼՍԷՆ կը հաղորդուի որ ոստիկանութիւնը ձերբակալեց վախճանեալ սպարապետ Նամըք բաշայի որդին հազարապետ Ահմէտ Եաքեր Պէյը , որ երկու տարի առաջ եւրոպա փախած և իրեն շնորհուած ներուստին հետեւանքով վերջերս Կ . Պոլիս վերադարձած էր :

ԱԻԵՏԱՐԱՆԱԾԱԽԱԼ ընկերութեան ժողովի մը մէջ Լորտ Սօլզբէրի լաւ խրատներ տուաւ միսիօնարներուն : Չինաստանի մէջ ըսաւ , քրիստոնեաներուն կոտորուելուն պատճառը Չինացոց ատելութիւնը չ'է , այլ՝ որովհետեւ ասոնք կը կարծեն , թէ քրիստոնեաներ գործիքներ են եւրոպական տէրութեանց ձեռքը : Եթէ միսիօնարները խոհեմութեամբ չ'վարուին , բազմաթիւ կեանքերու կորստեան պատճառ կ'ըլլան , և յարձակման իբր պատրուակ կը ներկայանայ կրօնքը , զոր կ'ուզեն քարոզել : Ամենամեծ վտանգը հոն է որ Չինացիք՝ եւրոպացիներն ու Ամերիկացիները կը նկատեն իբր քրիստոնեայ ազգեր , որովհետեւ ասոնք այս անունը կուտան իրենց , թէեւ իրենց բարքն ու կենցաղը բոլորովին կը հակասեն քրիստոնեայ բառին ճիշտ նշանակութեան : Աւելին կայ . կառավարութիւնները չ'քաջուեցան միսիօնարները նկատելէ իբր քարտէսներ , որոնց վրայ նկարեցին իրենց յատկագրիծները :

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ Բաշային քարտուղարը Հիւսէյին Պէյ , անցած ուրախ Րասէտտի նի պալատն ընդունուեցաւ և չորս ժամ ն . Բ . Խտիվին քով մնաց :

ՆԱԻԱՅԻՆ դատարան մը պիտի բացուի Աղէքսանդրիոյ Անգղիական հիւպատոսարանը , Շարգիյէ շոգենաւին ընկղմելուն պատճառները քննելու համար :

Կ. ՊՈԼՄԷՆ 30 սեպ. թուականա հե-
տեւալը կը գրեն :

Աւստրո-Հունգարական դեպարտամեն
թարգմանը եւրոպական թաղի մը մէջ յար-
ձակում կրած է Ահմէտ Ռէֆիկ անուն թուր-
քէ մը որ դանակ մը ձեռքը և « մահ կեա-
վորներուն » պոռալով կը շրջագայէր
Բերայի փողոցներուն մէջ : Ոստիկանները
մերժեցին յարձակողը ձերբակալել : Դես-
պանատունը բողոք բարձած է այս մասին
բայ մինչև հիմա հաղիւ կարողացած է յար-
ձակողը ձերբակալել ու մերժող ոստիկան-
ներու ձերբակալումը ստանալ :

ՊԱՊ-ԷԼ-ԼՈՒԲ փողոցին մէջ եւրոպացի
մը կուռյ մ'առթիւ դանակով կռնակէն վի-
րաւորեց ուրիշ եւրոպացի մը : Եւ երբ չա-
րագործը ձերբակալելու համար ոստիկան-
ները խուզարկութիւններ կ'ընէին տանը
մէջ, շուրջ 500 կեղծ թաւարիներ (20 զըշ-
նոց) և կէս թաւարիներ գտան :

ԱՇԽԱՐՀԻՍ ոչխարներուն վրայ հետե-
տալ տեղեկութիւնը կուռայ անգլիական
վիճակագրութիւն մը :

Ալճէրիա ունի 7, 475, 000 ոչխար՝ Գեր-
մանիա՝ տասը միլիոն 866, 000 . Արժանդին՝
75, 000, 000 . Աւստրալիա՝ 103, 000, 000 .
Աւստրիա՝ 3, 197, 000 . Պէլժիգա՝ 236, 000
Պուլկարիա՝ 6, 868, 000 . Գանատա՝ 1, 690-
000 . Բարեյուսոյ գլուխ՝ 14, 000, 000 . Բը-
րիտանական Հնդկաստան՝ 16, 875, 000 .
Տանիմարքա՝ 1, 246, 000 . Հոլանտա՝ 7, 000
000 . Ֆրանսա՝ 14, 445, 000 . Հունգարիա՝
8, 122, 000 . Իտալիա՝ 6, 900, 000 , Նոր-
վէկիա՝ 1, 417, 000 . Բոլոնիա՝ 2, 755, 000 .
Եւրոպական Ռուսիա՝ 44, 465, 000 . Սեր-
պիա՝ 3, 091, 000 . Սպանիա՝ 13, 359, 000 .
Շուէտա՝ 1, 298, 000 . Չեխոսլովակիա՝ 272, 000 .
Իւրիւկէյ՝ 16, 297 . Ամերիկայի Միացեալ
Նահանգները՝ 37, 657, 000 .

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՉԷՔ ՈՒՍԱՆԻԼ

Երիտասարդ մը որ երկար տարիներ
ժամագործութեան արհեստին հետեւելով
կատարեալ հմտութիւն առացած է ամեն
տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին
մէջ, կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճա-
ռատուն մը բանալու գրամագլուխ և մի-
անգամայն քիչ աստիճան մէջ արհեստը ու-
սանելու փափաքը ունենայ :

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի
ԳՍՖԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բա-
նակցել, անոնք որ հետամուտ են :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Նոր Կեանքի Ի Եւ Անահիտ Ի Անթերի
մի հաճաքածոյն ունենալ փափաքողք ա-
ռիթը ձեռքէ չ'փակցնելով փութով Խմբա-
գրատունս դիմեն, դիւրագին զայնս գնե-
լու :

ՀՆԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱԹ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

5449	8080	4277	7345	5502	6347
7746	1103	8255	8258	1070	665
4772	6886	7140	5280	2099	7966
3708	5835	7322	7001	1124	8017
		4147	1257	3085	

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օտանիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,
կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեալականներ, Գիտեր,
Հրախարտեր, Մանագրներ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճա-
ռականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և
չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պայտիկ եւ Նուագածուաց խմբի
Զօրանցիկ ձիշտ դիւնացը

ՕՂԱՆԵՆՍ ՄԻՄՈՆԵԱՆ ԵՒ

ԳԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազ-
գայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար
օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմ-
պելիներով յոգնած մտքերը կազդուրելու
համար, կրնան դիմել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ ,
որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ
հոգածութեամբ և խնամով զարգարած և
յաճախորդաց հանդիստը ի նկատի ունենա-
լով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ գը-
րած է :

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ Ի մէջ կը մեծարուին
զովարար ըմպելեաց ամենամաքուրները .
ընտիր և թարմ օշարակներ, անխարդախ
սուրճ և անխառն կաթ :

Մասնաւոր խնամքով կը պատրաստուի
նաև մրգաթան և չամչարակ (խոշապ) :

Հոն դիմող յաճախողք գոհ պիտի
մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր
սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն
խստապահանջները գոհացնելու աստիճան :

ՏՅԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ

ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԷՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահարածիները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ուր
և է ընկերութեան մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
Ի Քահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ
(Ի Մուսքի) պիտի դանէ.ք միմիայն 22 ՂՐԾ Ի
նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյց-
ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է :
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ
120 ՂՐԾ է սկսեալ մինչև 2500 ՂՐԾ : Ինչ-
պէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օք-
սիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօրի բազ-
մազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յար-
մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գօ-
ղօկրաֆներու :

Ա Ջ Դ

Գլխի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար
Մարտիրոս Եանօեանի որդի Պ. Կարապետ
Եանօեան 26 ամեայ Երիտասարդը Հայա-
լինի գէպըերէն Ի վեր անհետացած է և
Իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն
գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ Երիտա-
սարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգա-
յիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտա-
սարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է
տեղեկութիւն ունին անոր մասին, բարե-
հաճին ծանուցանել Արշալոյս Ի Տնօրինու-
թեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահ-
մանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ
չնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկ-
նել իրենց թերթերուն մէջ . Ի հարկին նը-
մանօրինակ ծառայութիւններ սպասելով
մեզմէ :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱԿԱԲԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-
ներու աշակցութեամբ եռաձայն և քառա-
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն
գնել փափաքողներն կամ բաժանորդագր-
ուիլ ուզողներն, կրնան դիմել՝ Արշալոյս Ի
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօ-
րէնին :

ՏՅԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ

ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԷՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահարածիները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ուր
և է ընկերութեան մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
Ի Քահիրէ

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-
կատար յ'Ազգ. քսանդրիա .